ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Կանադայի Տորոնտո քաղաքի ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը և մեկնում իր պաշտոնատեղին:

*
* *

Հոկտեմբերի 7-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճար է այցելում զոհված տիեզերագնացօդաչու Վ. Ի. Պացաևի կինը՝ տիկին Պացաևան՝ մի խումբ հյուրերի հետ:

Վեհարանում տիկին Պացաևային ընդունում է Հայոց Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճար և ապա Հայոց Հայրապետին է այցելում Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության Տիտոգրադ քաղաքի պատվիրակությունը, որը Հայաստան էր ժամանել բարեկամական այցով: Պատվիրակության անդամների մեջ էին՝ Հարավսլավիայի Տիտոգրադ քաղաքի ներկայացուցիչներ Բրանկո Լազովիչը, Վուկադին Իովանովիչը, Մոմչիլո Վուչինիչը, արհմիությունների Տիտոգրադի նախագահ Օլե Շաբովիչը:

Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունում է պատվարժան հյուրերին: Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Հյուրերին ընկերակցում էր Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Գր. Հասրաթյանը:

*
* *

Հոկտեմբերի 10-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆիլադելֆիայի հայոց ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Զավեն ծ. վրդ. Արզումանյանը և քարոզում «Եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօք իւրովք» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև սիյոնքահայ ուխտավորներ ԱՄՆ-ից, Լիբանանից և Հարավային Ամերիկայից:

*
* *

Հոկտեմբերի 15-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 9-ին, Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում տ. Զավեն ծ. վրդ. Արզումանյանը և վերադառնում Ֆիլադելֆիա՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Նույն օրը, ժամը 11-ին, Մայր տաճար և ապա Վեհափառ Հայրապետին է այցելում Չիլիից հյուրաբար Հայաստանում գտնվող Կաթոլիկ եկեղեցու բարոյական աստվածաբանության դասախոս Հովել Կախարդոն:

*
* *

Հոկտեմբերի 16-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 12-ին, Մայր տաճար և ապա Վեհափառ Հայրապետին է այցելում Հնդկաստանի պրեմիեր-մինիստրի քարտուղարության վարիչ Փարմեշվար Նարային Հաքսարը իր կնոջ հետ:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

Նույն օրը Բուխարեստից ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում տ. Զարեհ վրդ. Պարոնյանը և ռումինական աստվածաբանական համալսարանի դեկան, պրոֆ. հայր Իոան Կոմանը իր կնոջ հետ:

*
* *

Նույն օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Թբիլիսիի Ներսիսյան դպրոցի շրջանավարտների 8-րդ հավաքի մասնակիցների, որոնք Հայոց Հայրապետին են ներկայացնում իրենց հարգանքն ու երախտագիտությունը՝ ի դեմս Ներսես Աշտարակեցու:

Հայոց Հայրապետը, ողջունելով բոլոր ներկաներին, ոգեկոչում և օրհնում է անունն ու հիշատակը մեծագործ և հայրենասեր Ներսես Ե Աշտարակեցու, որը 1815 թվականին Թիֆլիսում բացել է հոգևոր դպրանոցը, որը 1824 թվականին տեղափոխվում է նրա կառուցած նորակերտ դպրոցի շենքը:

*
* *

Հոկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռոտերտաունի հայոց ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Տաճատ քհն. Դավթյանը և քարոզում «Զի ով է մարդ, որ գիտիցի զխորհուրդս Աստուծոյ. կամ ով ածիցէ զմտաւ թէ զինչ կամիցի Տէր» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճար են այցելում ՍՍՀՄ Սվեչնիկովի անվան երգեցիկ խումբը, որը հյուրախաղերի էր եկել Հայաստան:

Վեհարանում արվեստագետներին ընդունում է Հայոց Հայրապետը և զրույց ունենում նրանց հետ:

*
* *

Հոկտեմբերի 23-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելություն է տալիս ՍՍՀՄ միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության մինիստրության վարչության պետ Սոխին Սերգեյ Իվանովիչը:

Կեսօրից հետո ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հրատարակչության ղեկավարների մի խումբ, որոնք գտնվում էին Հայաստանում, այցելում են Հայոց Հայրապետին:

*
* *

Հոկտեմբերի 24-ին, կիրակի.—Գիտ խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան աբեղա Բալիոզյանը և քարոզում «Զանթաբչելի զգանձն փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Բուխարեստ են վերադառնում Մայր Աթոռի հյուրեր պրոֆ. Հակոբ Սիրունին և պրոֆ. Իոան Կոմանն ու իր տիկինը:

*
* *

Հոկտեմբերի 29-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: